ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է

1) տատանումների տևողությունից
2) տատանումների ուժգնությունից
3) տատանումների թափից
4) տատանումների հաճախականությունից

2 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
2) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր
3) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
4) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ

3 Մեծ սեքստան կազմված է

1) 7 աստիճանից և 6 տոնից
2) 7 աստիճանից և 5.5 տոնից
3) 6 աստիճանից և 5 տոնից
4) 6 աստիճանից և 4.5 տոնից

4 Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
2) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
3) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
4) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից

5 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
2) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
3) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
4) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով

6 Մեծացրած սեքստակորդի կառուցվածքն է.

1) մք.4 + մ.3
2) փքց.4 + մ.3
3) մ.3 + մծց.3
4) մծց.4 + փ.3

7 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

8 D_2 - ը կառուցվում է

1) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
3) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
4) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3

9 VII_7- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + փ.3 + մ.3
2) մ.3 + փ.3 + փ.3
3) փ.3 + փ.3 + փ.3
4) փ.3 + մ.3 + փ.3

10 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
2) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
3) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
4) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2

11 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) արպեջիո
2) տոնայնություն
3) հնչյունաշար
4) գամմա

12 Համանուն տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

13 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) 6^-, 7^- աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
2) 6^-, 7^- աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
3) 6^+ աստիճանը
4) 7^+ աստիճանը

14 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական
2) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փռյուգիական
3) Իոնական, Կրկնակի հարմոնիկ, Դորիական
4) Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական

15 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^+, 7^+ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
2) 6^-, 7^- աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
3) 6^+, 7^+ աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
4) 6^-, 7^- աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս

16 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) տակտ
2) ռիթմ
3) մետր
4) չափ

17 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
2) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
3) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
4) սեքստոլը, կվինտոլը, տրելը

18 Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից
2) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր տակտերից
3) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից
4) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից

19 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) նոտաների քանակն է
2) տակտերի քանակն է
3) հնչյունների քանակն է
4) պարզ չափերի քանակն է

20 նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի ֆա նոտայի տեղը
2) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս մեծ օկտավայի ֆա նոտայի տեղը
3) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
4) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը

21 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրիո
2) տրել
3) տրիոլ
4) տրեմոլո

22 Հետևյալ տերմինները՝ **Prestissimo**, **Agitato**, **Amoroso**, **Doloroso, Brilliante** նշանակում են (ըստ հերթականության)

1) հարմարավետ, զրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
2) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
3) ծայրահեղ արագ, հուզված, սիրով, թախծալի, փայլուն
4) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով

23 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) խիտ և խառը
2) լայն և խառը
3) խիտ, լայն և խառը
4) խիտ և լայն

24 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) ֆուգա
2) կանոն
3) կոնտրապունկտ
4) իմիտացիա

25 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն, խառը և ազատ
2) հնագույն և ազատ
3) հնագույն, խիստ և ազատ
4) հնագույն, խիստ և խառը

26 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման.

1) $ABACAB^1A$
2) ABCBA
3) ABACA
4) ABCAB

27 Հայ ժողովրդական երաժշտության ճյուղերն են.

1) գեղջկական երգ, քաղաքային երգ, հոգևոր երգ
2) տաղային արվեստ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
3) հոգևոր երգ, գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ
4) գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ

28 Հայ ժողովրդական երաժշտությունը

1) մոնոդիկ է
2) հարմոնիկ է
3) պոլիֆոնիկ է
4) հոմոֆոն է

29 Հայկական նոտագրության ստեղծողն է.

1) Նիկողայոս Թաշչյանը
2) Համբարձում Լիմոնջյանը
3) Կոմիտասը
4) Գաբրիել Երանյանը

30 Հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգերը ձևավորվում են

1) տրիխորդների հաջորդման սկզբունքով
2) տետրախորդների շղթայման սկզբունքով
3) տետրախորդների հաջորդման սկզբունքով
4) օկտավաների շղթայման միջոցով

31 Հորովելները

1) տղամարդու աշխատանքային երգեր են
2) պարերգեր են
3) կանանց աշխատանքային երգեր են
4) պանդխտության երգեր են

32 Ո՞ր շարքում են միայն հայ գեղջկական երգի ժանրեր

1) Անտունիներ, օրորներ, քայլերգեր
2) հայրենասիրական, ռոմանս, օրորներ
3) աշխատանքային, ծիսական, պանդխտության
4) աշխատանքային, ծիսական, դրամատիկական

33 Սանթուրը ժողովրդական նվագարան է,

1) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
2) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
3) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
4) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք

34 Ո՞վ է հայկական քանոնի դպրոցի հիմնադիրը.

1) Ալվարդ Միրզոյան
2) Խաչատուր Ավետիսյան
3) Անժելա Աթաբեկյան
4) Ծովինար Հովհաննիսյան

35 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ թառահար.

1) Իլյա Մինասյան
2) Ջիվան Գասպարյան
3) Հովհաննես Դարբինյան
4) Մարտին Խաչատրյան

36 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ ուդահար.

1) Միհրան Դեմիրճյան
2) Վաչե Հովսեփյան
3) Հովհաննես Դարբինյան
4) Մարտին Խաչատրյան

37 Ո՞վ է «Ծամերով պարի» հեղինակը

1) Արզաս Ոսկանյան
2) Խաչատուր Ավետիսյան
3) Ծովակ Համբարձումյան
4) Գրիգոր Հախինյան

38 Նշվածներից ո՞րն է Սայաթ- Նովայի երգը.

1) Նա մի նազ ունի
2) Նազանի
3) Ախ, Մարալ ջան
4) Լեպհո լե-լե

39 Ո՞ր գործիքներն են կազմում Սազանդարների խումբը.

1) դհոլ, զուռնա, դուդուկ
2) քամանչա, դուդուկ, դափ
3) քամանչա, թառ, դափ
4) քամանչա, թառ, դհոլ

40 Ո՞վ է Արևելյան ժողգործիքների սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիրը.

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Արամ Մերանգուլյան
3) Վարդան Բունի
4) Սաշա Օգանեզաշվիլի

41 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Տիգրան Չուխաջյան
2) Բարսեղ Կանաչյան
3) Ռոմանոս Մելիքյան
4) Կոմիտաս

42 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Արամ Խաչատրյան
2) Առնո Բաբաջանյան
3) Գրիգոր Եղիազարյան
4) Ալեքսանդր Հարությունյան

43 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Տիգրան Մանսուրյան
2) Էդվարդ Միրզոյան
3) Անուշավան Տեր-Ղևոնդյան
4) Ղազարոս Սարյան

44 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) դոդեկաֆոն
2) պոլիֆոնիկ
3) պուանտիլիստական
4) մոդալ

45 Ո՞վ է հայկական առաջին քառաձայն պատարագի հեղինակը.

1) Քրիստոփոր Կարա-Մուրզա
2) Արմեն Տիգրանյան
3) Մակար Եկմալյան
4) Կոմիտաս

46 Գրիգոր Նարեկացին առավել հայտնի է իր

1) սաղմոսներով
2) տաղերով
3) շարականներով
4) երգերով

47 Ավետ Տերտերյանի ո՞ր սիմֆոնիայի կազմի մեջ են ներառվել ազգային փողային գործիքներ.

1) թիվ 1
2) թիվ 8
3) թիվ 3
4) թիվ 7

48 Ո՞ր բալետում է Էդգար Հովհաննիսյանն օգտագործել ժողովրդական մեղեդիներ.

1) «Հավերժական կուռք»
2) «Երկնագույն նոկտյուրն»
3) «Ժաննա դ՛Արկ»
4) «Անտունի»

49 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Ֆելիքս Մենդելսոն
2) Ֆերենց Լիստ
3) Յոհաննես Բրամս
4) Ֆրանց Շուբերտ

50 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործության.

1) «Կատերինա Իզմայլովա»
2) «Խովանշչինա»
3) «Իվան Սուսանին»
4) «Եվգենի Օնեգին»

51 Երգեհոնը

1) ստեղնաշարային գործիք է
2) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
3) ստեղնաշարային լարային գործիք է
4) ստեղնաշարային-փողային գործիք է

52 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական պարերի» հեղինակը.

1) Յոհաննես Բրամս
2) Ռոբերտ Շուման
3) Ֆելիքս Մենդելսոն
4) Ֆերենց Լիստ

53 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում ռոմանտիզմի շրջանին.

1) Ֆրանց Շուբերտ
2) Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ
3) Յոհաննես Բրամս
4) Ֆերենց Լիստ

54 Ո՞վ է «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Դոն Կառլոս» օպերաների հեղինակը.

1) Ջակոմո Պուչինի
2) Ջուզեպպե Վերդի
3) Ջոակինո Ռոսսինի
4) Վինչենցո Բելլինի

55 Դմիտրի Շոստակովիչի թիվ 7-րդ սիմֆոնիան գրվել է. . .

1) 2-րդ աշխարհամարտի օրերին
2) 1937թ. ստալինյան բռնությունների օրերին
3) 1-ին աշխարհամարտի օրերին
4) 1917թ. հեղափոխության օրերին

56 Նշվածներից ո՞րը Ղ. Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի մաս չի կազմում.

1) «Մայրամուտ»
2) «Արևային պեյզաժ»
3) «Գառնի»
4) «Հին Երևան»

57 Ո՞վ է «Սայաթ-Նովա» օպերայի հեղինակը.

1) Տիգրան Մանսուրյան
2) Էդգար Հովհաննիսյան
3) Ալեքսանդր Հարությունյան
4) Արամ Խաչատրյան

58 Նշվածներից ո՞ր վոկալ շարի հեղինակն է Ռոմանոս Մելիքյանը.

1) «Երազ օրեր»
2) «Հայրենիքի ջրեր»
3) «Զմրուխտի»
4) «Խոհեր»

59 Լյուդվիգ վան Բեթհովենի ո՞ր սիմֆոնիայում է հնչում երգչախումբ.

1) թիվ 7
2) թիվ 9
3) թիվ 6
4) թիվ 3

60 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը չի գրել սիմֆոնիա.

1) Ֆրեդերիկ Շոպեն
2) Ֆրանց Շուբերտ
3) Յոհաննես Բրամս
4) Ռոբերտ Շուման